ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (094)200020 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2014թվականի N 14

ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի պահանջներով.

Հաստատել Գեղանիստ գյուղական համայնքի 2015թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածքի 18-րդ կետի պահանջներով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական շինության) տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1) Մինչև 300քմ.ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ

2) Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից 500 քմ. ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 15000 դրամ

բ) 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ

գ) 1001 մինչև 3000քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ:

դ) 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ